ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ-2

ՀՀ քննչական կոմիտեի կարիքների համար գնումների ARMEPS էլեկտրոնային համակարգի միջոցով ավտոմեքենաների անիվների ձեռքբերման նպատակով ձևավորված « ՀՀՔԿԴ-ԳՀԱՊՁԲ-ԱՆ-17/3» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի

Գնահատող հանձնաժողովի նիստը տեղի ունեցավ 22.09.2017թ. ժամը ***10⁰⁰***-ին, ՀՀ քննչական կոմիտեի վարչական շենքում, ք. Երևան, Մամիկոնյանց 46/5 հասցեում:

Նիստին մասնակցում էին գնահատող հանձնաժողովի նախագահ Գ.Արշակյանը, գնահատող հանձնաժողովի անդամներ Վ. Պետրոսյանը, Վ.Հարությունյանը, Վ.Գսպոյանը, Է.Արշակյանը և քարտուղար Մ.Մուրադյանը:

Օրակարգ

Հայտերի բացման և գնահատման մասին

1.Հայտեր ներկայացրած մասնակիցների անվանումները և գտնվելու վայրի հասցեները

«ՀՀՔԿԴ-ԳՀԱՊՁԲ-ԱՆ-17/3» ծածկագրով ընթացակարգին ներկայացրած հայտերը բացվել են ARMEPS գնումների էլեկտրոնային համակարգի միջոցով հրավերով սահմանված հայտերի ներկայացման վերջնաժամկետին: Հայտ են ներկայացրել հետևյալ կազմակերպությունները.

1. **«ԱՐՊԱՆԻՎ» ՍՊԸ (ք. Երևան, Նար-Դոսի 122)**
2. **<<Տուրբոլայն>> ՍՊԸ (ք. Երևան, Շիրազի 39/1)**
3. **<<Սենտրալ>> ՍՊԸ (ք. Երևան, Եղվարդի խճ.108)**

2. Տվյալներ բացված յուրաքանչյուր հայտում պահանջվող փաստաթղթերի առկայության մասին

2.1. Բոլոր մասնակիցների կողմից էլեկտրոնային ձևով ներկայացված հայտերում առկա են հրավերով պահանջվող փաստաթղթերը:

3.Տվյալներ յուրաքանչյուր մասնակցի ներկայացրած փաստաթղթերի՝ հրավերի պայմաններին համապատասխանության վերաբերյալ

3.1 **«ԱՐՊԱՆԻՎ» ՍՊԸ-ի** կողմից ներկայացված հայտը /հայտում առկա փաստաթղթերը/ կազմված է հրավերի պահանջներին համապատասխան :

3.2 **<<Տուրբոլայն>> ՍՊԸ-ի** կողմից ներկայացված հայտում /հայտում առկա փաստաթղթերում/ կան թերություններ. չի պահպանվել հրավերի առաջին մասի 8.19 կետը՝ փաստաթղթի արտատպումից հետո էլեկտրոնային թվային ստորագրությունը տեսանելի չէ:

3.3 **<<Սենտրալ>> ՍՊԸ-ի** կողմից ներկայացված հայտում /հայտում առկա փաստաթղթերում/ կան թերություններ. Հայտի ապահովման մաս կազմող վճարման պահանջագրում լրացված է պահանջագրի համարը և ներկայացման ամսաթիվը, ինչը պետք է լրացվեր շահառուի կողմից՝ վճարողի բանկին վճարման պահանջագիրը ներկայացնելիս:

4. Յուրաքանչյուր մասնակցի առաջարկած գինը և նախահաշվային գինը

Հ/Հ	Անվանում	Քանակ	Նախահաշվային գին	Մասնակիցների անվանումները և ներկայացրած գները՝ առանց ԱԱՀ-ի /ՀՀ դրամ/		
				«ԱՐՊԱՆԻՎ» ՍՊԸ	**<<Տուրբոլայն>> ՍՊԸ***	**<<Սենտրալ >> ՍՊԸ**
1	ավտոմեքենաների անիվներ	4	200000	209320	248000	237000
2	ավտոմեքենաների անիվներ	4	220000	179320	208000	220000

* հանդիսանում է ԱԱՀ չհանդիսացող

5. Տեղեկություններ հայտերի հետկանչման կամ փոփոխությունների, հայտերի վերաբերյալ կատարված հարցումների մասին

-Հայտերի հետկանչում կամ փոփոխություններ, հայտերի վերաբերյալ կատարված հարցումներ և պատասխաններ չեն եղել:

Հանձնաժողովը արձանագրեց, որ ընթացակարգի 1-ին չափաբաժնի համար ընկերությունների կողմից ներկայացված գնային առաջարկները գերազանցում են այդ գնումը կատարելու համար նախատեսված ֆինանսական միջոցները, անհրաժեշտություն է առաջացել վարելու գների նվազեցման շուրջ միաժամանակյա բանակցություններ:

Հանձնաժողովը որոշեց՝

1. Մերժել **<<Տուրբոլայն>> և <<Սենտրալ>> ՍՊ** ընկերությունների կողմից ներկայացված հայտը՝ հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ՝ Կարգի) 40-րդ կետի 4-րդ ենթակետը:
2. Հիմք ընդունելով Կարգի 40-րդ կետի 5-րդ ենթակետը՝ գների նվազեցման շուրջ միաժամանակյա բանակցություններ վարելու համար հաջորդ նիստը հրավիրել **2017թ. սեպտեմբերի 26-ին, ժամը 11:00-ին,** ՀՀ քննչական կոմիտեի վարչական շենքում, ք. Երևան, Մամիկոնյանց 46/5 հասցեում, 621 սենյակում:

Քարտուղարին՝

Մեկ աշխատանքային օրում բավարար գնահատված բոլոր մասնակիցներին էլեկտրոնային ձևով միաժամանակ ծանուցել գների նվազեցման շուրջ միաժամանակյա բանակցությունների վարման օրվա, ժամի և վայրի մասին:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5, դեմ՝ 0:

Մասնակցում էին

Հանձնաժողովի նախագահ _____ Գ.Արշակյան

Հանձնաժողովի անդամներ՝ _____ Վ. Պետրոսյան

_____ Վ.Հարությունյան

_____ Վ.Գսպոյան

_____ Է.Արշակյան

Հանձնաժողովի քարտուղար՝ _____ Մ.Մուրադյան